

### **ԴԱՍ 4.1. Աշխարհագրական դիրքը և սահմանները: Երկրաբանությունը, օգտակար հանածոները**

• • •

Ընդ որում , ջերմաստիճանային տարբերությունները համեմատաբար փոքր են : Սակայն տարվա ընթացքում մեծ են խոնավացման տարբերությունները՝ տեղումների տարեկան քանակը և սեզոնային բաշխումը: Մայրցամաքի մեծ մասում հստակ արտահայտված են խոնավ և չորային սեզոնները: Կլիմայի ցամաքայնությունը լավ է արտահայտված մայրցամաքի հյուսիսային շրջաններում, ինչը պայմանավորված է մեծ ձգվածությամբ(7500 կմ.) և Ասիայի հսկայական չորային (արիդ) տարածքների մոտիկությամբ:

• • •

Գնդաձևության պատճառով Երկիրը տաքանում է անհավասարաչափ, քանի որ Արեգակի ճառագայթների անկման անկյունը հասարակածից դեպի բևեռներ շարժվելիս նվազում է: Նվազում է նաև Երկրի մակերևութի ստացած ջերմության քանակը: Հասարակածային լայնությունները շատ ջերմություն են ստանում: Քանի որ օդը տաքանում է երկրի մակերևութից, գետնամերձ շերտի տաքացած օդի ծավալը մեծանում է և այն կատարում է վերընթաց շարժում: Դրա արդյունքում հասարակածային լայնությունների ներքնոլորտի ստորին շերտում օդը նոսրանում է և հաստատվում է մթնոլորտային ցածր ճնշման մարզ: Ներքնոլորտի վերին շերտում տեղի է ունենում հակառակը՝ օդը խտանում է և հաստատվում է մթնոլորտային բարձր ճնշման մարզ: Մերձբևեռային լայնությունները Արեգակի ճառագայթների անկման փոքր անկյան պատճառով քիչ ջերմություն են ստանում, օդը սառն է , ծանր և կուտակվում է ներքնոլորտի ստորին շերտում: Դա է պատճառը, որ այստեղ հաստատվում է բարձր ճնշում, ներքնոլորտի վերին շերտում՝ ցածր ճնշում: Եվ քանի որ օդը շարժվում է բարձր ճնշման մարզից դեպի ցածր ճնշման մարզ , հասարակածային լայնությունների ներքնոլորտի վերին շերտից օդն ուզում է տեղաշարժվել մերձբևեռային լայնությունների ներք-

նույրտի վերին շերտ, մերձբևեռային լայնությունների ստորին շերտից էլ՝ հասարակած: Սակայն Կորիոլիսի ուժի(արագացման ուժի) ազդեցությամբ օդը մերձբևեռային լայնություններ չի հասնում, արևադարձերում շեղվում է: Այն խտանում է, ծանրանում և երկու կիսագնդերի 30<sup>0</sup> լայնությունների շրջանում կատարում վարընթաց շարժում : Վարընթաց շարժում կատարող օդը տաքանում է, հեռանում հագեցման վիճակից և տեղումներ քիչ է առաջացնում : Ներքնույրտի ստորին շերտում օդը խտանում է և ձևավորվում է մթնոլորտային բարձր ճնշման գոտի: Եվ քանի որ հասարակածային լայնությունների ներքնույրտի ստորին շերտում, մթնոլորտային ճնշումը ցածր է, արևադարձային լայնություններից օդը շարժվում է դեպի հասարակած: Կորիոլիսի ուժի շնորհիվ այդ օդը շարժման նախնական ուղղությունից շեղվում է և առաջանում են ցածր լայնությունների կլիման ձևավորող գերիշխող քամիները՝ **պասսատները**:

• • •

Մակերևութային ջրերի սակավությունը լրացվում է ստորերկրյա ջրերի պաշարներով, որոնք գտնվում են ալժիրյան, լիբիական և **Սահարայի** ընդարձակ արտեզյան ավազաններում:

Աֆրիկայի մնացյալ տարածքների գետերը պատկանում են Ատլանտյան ( մայրցամաքի տարածքի 50%-ը ) և Հնդկական (18,5%-ը ) օվկիանոսների ավազաններին, որոնց միջև գլխավոր ջրբաժանը մայրցամաքի արևելյան մասում է:

• • •

Սահարայի արևելքում, Եգիպտոսի սահմաններում անապատը ոռոգվում է Նեղոսի տարանցիկ ջրերով, որի հոսքը ձևավորվում է Արևելաաֆրիկյան սարահարթում ( հարկ է նշել, որ սարահարթը մայրցամաքի խոշորագույն գետերի համար՝ Նեղոս, Կոնգո, Զամբեզի և այլն մի յուրահատուկ և հզոր ջրագրական հանգույց է) թափվող առատ տեղումներից (Սպիտակ Նեղոս) և Եթովպական բարձրավանդակի Թանա լճից սկիզբ առնող Երկնագույն Նեղոսի ջրերից: Նեղոսի տարանցիկ տարեկան հոսքը անապատով կազմում է 73 խկմ, որից ընդամենը 30 խկմ ջուր է հասնում Միջերկրական ծով: Մնացյալը ծախսվում է ոռոգման համար, մասամբ էլ՝ գոլորշացման: Ոռոգվող հողերում ստորերկրյա ջրերը առավելապես սնվում են ջրանցքների և ջրամբարների ներծծված ջրերից: Մշտական տարանցիկ գետեր են նաև Նիգերը, Շարին, որոնք սկիզբ են առնում տեղումնաշատ շրջաններից, բայց չորային սեզոնին ջրի հիմնական մասը՝ ավելի քան 50%-ը, ծախսվում

է գոլորշացման և ստորերկրյա ջրերի սնման համար : Աֆրիկյան ամենա քիչն է ապահովված միավոր տարածքին բաժին ընկնող գետաջրերի պաշարներով (139մմ): Այդ ցուցանիշով ամենախոնավ մայրցամաքին՝ Հարավային Ամերիկային գիջում է 5 անգամ: Չորային կլիմայով պայմանավորված մայրցամաքի մեծ մասում գյուղատնտեսության զարգացման համար բացառիկ դեր է խաղում ոռոգումը: Այն ունի հազարամյակների պատմություն՝ Նեղոսի հովիտ (Եգիպտոս, Սուդան), Նիգերի հովիտ, Մալի,ՀԱՀ և այլն:

• • •

**Աֆրիկայի խոշոր լճերը**

Լճեր	Մակերեսը (Հազար քառ. կմ)	Ջրի ծավալը (խտ. կմ)	Առավելագույն խտությունը (մ)	Ծագումը
Վիկտորիա	68	2790	80	Տեկտոնական
Տանգանիկա	34	18900	1470	Գրաբենային
Նյասա	30.8	7750	706	Գրաբենային
Չադ	26-10	44.4	11	Մնացորդային (անջատման)
Ռուդոլֆ	8.5	-	73	Տեկտոնական

• • •

Վերին հարկը կազմում են հսկա ֆիկուսները (մինջև 80մ բարձրությամբ), յուղատու արմավենին, գինու արմավենին, սեյբան, երենուսը (բնափայտը ջրում չի փտում, արժեքավոր է կահույքի պատրաստման համար), կոլա ծառը (սերմերից ստացված մզվածքը օգտագործում են բժշկության մեջ և կենսունակությունը բարձրացնող ըմպելիքների ստացման համար): Ցածր հարկերում աճում են բանաններ, լիբերական սրճենի: Դրանց մեծ մասը տեխնիկական ու սննդային նշանակություն ունեն, սերմերից էլ յուղ են ստանում:

Խոնավ հասարակածային անտառներում ապրում են մարդանման կապիկներ՝ գորիան (անտառի թավուտներում) և շիմպանզեն (եզրամասերում):

Ջոնայում տարածված են կարմրադեղին (ֆերալիտային) հողերը, ինչը պայմանավորված է մայրական ապարներում երկաթի և ալյումինի օքսիդի մեծ պարունակությամբ:

• • •

Աֆրիկայի սավանանների կենդանական աշխարհը իր բազմազանությամբ հավասարը չունի, ինչը պայմանավորված է ոչ միայն բնության էվոլյուցիոն զարգացման առանձնահատկություններով և էնդեմիկների առատությամբ, այլև հսկայական կերային բազայով: Փարթամ խոտային բուսականությունը, խոտակեր կենդանիների մեծ քանակ է ապահովում՝ փիղ, ռնգեղջյուր, ընձուղտ, գեբր, գոմշացուլ, այծքաղների տարբեր տեսակներ: Գիշատիչներից մեծ տարածում ունեն կատվագգիները՝ առյուծ, լեոպարդ (ընձառյուծ), հեպարդ, շնագգիներից՝ բորենի, չախկալ: Գետերում վխտում են կոկորդիլոսները: Չափազանց հարուստ է նաև թռչնաշխարհը:

Սավանանների հողակլիմայական պայմանները բարենպաստ են արևադարձային հողագործության համար: Բարձրախոտային սավանանների տակ ձևավորվում են կարմրահողեր, տիպիկ սավաննայում՝ կարմրագորշ հողեր, որոնց վրա աճեցվող առավել տարածված մշակաբույսերից են բամբակենին, գետնանուշը, ծխախոտը և եգիպտացորենը, սորգոն:

• • •

Աֆրիկայի կենդանական աշխարհի բազմազանությունը և էնդեմիկների (տեղածին) առատությունը նպաստել են շատ երկրների խոշոր քաղաքների կենդանաբանական այգիների կենդանու տեսակային կազմի՝ **Ֆաունայի** հարստացմանը: Շրջակա միջավայրին մեծ վնաս է պատճառել նաև մարդու գործունեությունը հողօգտագործման եղանակը, անասունների գերարածեցումը, վայրի կենդանիների զանգվածային ոչնչացումը՝ որսագողությունը (Օրինակ՝ փղոսկրի համար) և այլ գործոններ նպաստել են մի շարք տարածաշրջաններում էկոլոգիական հավասարակշռության խախտմանը:

• • •

Մայրցամաքի տեղադիրքը հասարակածից հյուսիս և հարավ հանգեցնում է տարվա եղանակների հակադրությանը հյուսիսային և հարավային կիսագնդերում՝ հյուսիսային կիսագնդի ամառային սեզոնին համապատասխանում է ձմեռային սեզոնը հարավային կիսագնդում և հակառակը:

Հասարակածից հեռանալուն զուգընթաց կարճանում է անձրևային սեզոնը և նվազում տեղումների քանակը: Կոնգոյի ավազանում, Գվինեական ծոցի ափամերձ գոտում թափվում են 2000-3000մմ, տեղումներ, իսկ լեռների հողմակողմ լանջերին՝ ավելի քան 3000մմ.: Ամենախոնավ վայրը Կամերուն գործող հրաբխի լանջին գտնվող Դեբունջա բնակավայրն է (տա-

րեկան 9655մմ.)՝ Աֆրիկայի« խոնավության բևեռը»:

• • •

Այսպիսով, երկրի մակերևույթի անհամաչափ տաքացման հետևանքով և Կորիոլիսի ուժի շնորհիվ ձևավորվում է մթնոլորտային ցածր ճնշման երեք գոտի(հասարակածային և բարեխառն լայնություններ) և բարձր ճնշման չորս գոտի(արևադարձային և մերձբևեռային լայնություններ), որոնցով էլ պայմանավորված է խոնավության օրինաչափ բաշխումը երկրի վրա. բարձր ճնշում՝ ցածր խոնավություն, ցածր ճնշում՝ բարձր խոնավություն:

• • •

Ներքին հոսքի ավազանի լճերը որպես կանոն սակավաջուր են և աղի: Չորային սեզոնում դրանց մակարդակը իջնում է, մակերեսը՝ կրճատվում է: Անվանում են նաև «թափառող լճեր» (բացատրեք երևույթը): Խոշորագույն լիճը **Չադն** է: Այն աղիավուն լիճ է՝ մինչև 20% աղիությամբ, իսկ լիճ թափվող գետերի գետաբերանների մոտ՝ քաղցրահամ: Լճում տեղի է ունենում ջրի մշտական հերթափոխ, ինչը պայմանավորված է ատոերկրյա մեծ հոսքով, որոնք սնում են հարակից շրջանների գրունտային ջրերին:

• • •

Տեղումների տարեկան քանակը 2000-2500մմ, միջին տարեկան ջերմաստիճանները 24-29°C: Զբաղեցրած տարածքով օրգանական աշխարհի տեսակային կազմով և անտառների հարկայնությամբ սրանք զիջում են Հարավային Ամերիկայի խոնավ հասարակածային անտառներին:

• • •

Սավաննաներում առանձնացնում են երեք ենթազոննա՝ **բարձրախոտային սավաննա**, 8-9 ամիս խոնավ սեզոնով, 2-3 ամիս՝ չորային, **տիպիկ սավաննա**, վեց ամիս խոնավ, վեց ամիս՝ չորային, **անապատացված սավաննա**՝ 8-9 ամիս չորային, 2-3 ամիս՝ համեմատաբար խոնավ սեզոնով: Ենթազոննան հատկապես մեծ տարածք է զբաղեցնում մայրցամաքի արևելքում: